ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 80

«17» 08 2020 թ. գ. Երևան

ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Կարեն Ավագի Գաբրիելյանին Շիրակի մարզի դատախազի պաշտոնից փոխադրելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության սեփականության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի պաշտոնում նշանակելու և Շիրակի մարզի դատախազի պարտականությունների կատարումը նույն մարզի դատախազի տեղակալ Արտյոմ Էդիկի Օվսյանի վրա դնելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ համապատասխանաբար՝ 14.08.2020թ. N 258-Ա և 259-Ա հրամանները և այն, որ անհրաժեշտ է նրանց միջև կատարել վարույթների, փաստաթղթերի, գույքի, կնիքների ու դրոշմակնիքների հանձնում-ընդունում, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Կատարել Կ.Գաբրիելյանի կողմից՝ Շիրակի մարզի դատախազության վարույթների, փաստաթղթերի, գույքի, կնիքների ու դրոշմակնիքների հանձնում, իսկ Ա.Օվսյանի կողմից՝ ընդունում, որի համար ստեղծել հանձնախումբ՝ հետևյալ կազմով.

Հանձնախմբի ղեկավար՝

Աֆանդյան Արմեն - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ

Հանձնախմբի անդամներ՝

Հովսեփյան Կարեն - Շիրակի մարզի դատախազության ավագ դատախազ

Մարտիրոսյան Հայկ - Հայաստանի Հանրապետության դատախազության ֆինանսատնտեսական վարչության պետ

Հովսեփյան Մարո -	Հայաստանի Հանրապետության դատախազության ընդհանուր բաժնի գլխավոր մասնագետ
Խալաթյան Նաիրա -	Հայաստանի Հանրապետության դատախազության արխիվի բաժնի պետ
Բաղդասարյան Լևոն -	Հայաստանի Հանրապետության դատախազության առաջին բաժնի պետ
Մուսիկյան Քնարիկ -	Շիրակի մարզի դատախազության տարածքային բաժնի ավագ մասնագետ:

2. Հանձնախմբի ղեկավարին՝ հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն ներկայացնել մինչև 2020 թվականի սեպտեմբերի 10-ը:

Ա.ԴԱՎԹՅԱՆ